ԳԼՈՒԽ ԺԵ.

Համբաւ Գաղղիական զօրաց։ Գաղղու�Արաբիոյ. Վայրուտիւն այլազգեաց և զենուորիլ նոցա։ Նեղութիւն քրիստոնէից։ Սոսկալի տառապանք վանականաց։ Բանտարկութիւն միաբանաց. ուխտաւորաց և ժողովրդոց քաղաքին։ Տիրել Գաղղիացւոց Յոպպէի և Գազայի։

Մեծն Նաբոլիոն Պոնաբարդ կոչեցեալ, բազմութեամբ Գաղղիական Լեգէոնաց եւ 200 պատերազմական նաւուք դիմեաց 'ի սահմանս Եգիպտոսի, և յետ արիւնահեղ պատերազմին Ապուքիրայ, եմուտ յԱղէքսանդրիա, (1798 յ30 Յունիսի)։ Այս լուր անակնկալ ահաբեկեալ դղրդեաց զերկիրն Պաղեստինայ. զի ասէին թէ ոչ երբէք զերծանի 'ի ձեռաց նորա բովանդակ երկիրն Արաբիոյ։ Մահմետական ժողովուրդք բնակեալ յԵրուսաղէմ և 'ի սահմանս նորա, խուճապեալ տագնապեցան իրրեւ 'ի վերահաս վտանգէ մեծէ, և միաբանեալ ամենեքեան դիմեցին 'ի քաղաքն Ս. և ժողովեցան բազմութիւն մեծ, եւ կազմեցան կացին իրրեւ ախոյեան ընդդէմ հեռաւոր թշնամւոյ։ Սակայն խժդժութիւն բնատուր բարուց նոցին, գրգռէր զնոսա ընդդէմ անզէն քրիստոնէից բնակելոց յԵրուսաղէմ եւ 'ի սահմանս նորա, և թափել 'ի վերայ նոցա զյաստուն սրբոտութեան իւրեանց։

Եւ սկիզբն արարին գործելոյ զանհնարին չարիս և զանլսելի դառնութիւնս, զորս անկարելի լինի մի ըստ միոջէ դրոշմել 'ի գիր. զի առ զայրոյթ սրտի իւրեանց սպառնային 'ի մի ումեք կլանել զքրիստոնեայս, և կամ 'ի մի հարուած սուսերի ջնջել և բառնալ 'ի միջոյ և պատահիլ ճոխ աւարի եկեղեցեաց և վանօրէից. զի առաւել կասկած տիրեալ էր 'ի սիրտս նոցա, իրրեւ թէ քրիստոնեայք և վանականք Ս. Քաղաքին, դոլով կրօնակից Նաբոլիոնի, համախոհ են և դրդիչ նմին։ Յետ այնորիկ գլխաւորք այլազգեացն Երուսաղէմի ժողովեցան 'ի դատարանի, և զկնի խորհրդոյ, կոչեցին անդ զԹարգմանս երից վանաց, եւ պատուիրեցին նոցա ժողովել և բերել զզէնս, որք միանգամ դտանին 'ի վանօրայս, և ոչ թագուցանել. զի ահա